

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՐՁՐԱՓՈՅՆ ԴԱՏԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆԵՐԸ. ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՍ ԿԱԶՄԵՅԻՆ ԵՐԵՔ ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՆԵՐ

Երեքշաբթի, 21 Յուլիս 2020-ին, Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու Դատական Բարձրագոյն Յանձնախումբը հրապարակեց Սուրիոյ խորհրդարանական օրէնսդրական 3-րդ նստաշրջանի՝ 2020-ի ընտրութիւններուն արդիւնքով ընտրուած 250 երեսփոխաններուն անունները:



Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան ընտրուեցան երեք սուրիահայեր, Յալէպէն՝ ազգի թեկնածու Ժիրայր Ռէիսեան եւ Պաաս կուսակցութեան թեկնածու իրաւաբան Լիւսի Իսկէնեան, Դամասկոսէն՝ անկախ թեկնածու դոկտ. Նորա Արիսեան:

Սուրիոյ խորհրդարանի 250 անդամներուն համար կը մրցէին Սուրիոյ բոլոր նահանգներէն 1656, որոնց 200-ը կին, թեկնածուներ:

Դատական Բարձրագոյն Յանձնախումբի նախագահ Սամեր Չմրիք, մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնեց, որ քուէարկութեան մասնակցած է ընտրելու իրաւունք ունեցող 6.224.687 քաղաքացի, մասնակցութեան տոկոսն է՝ 33, 17%:

Յիշենք, որ Սուրիոյ խորհրդարանի կազմութենէն՝ 1928-էն մինչեւ 2020, խորհրդարանին մաս կազմած են 24 հայ երեսփոխաններ: Մէկէ աւելի անգամներ խորհրդարանի երեսփոխան ընտրուած են միաժամանակ երեք կամ չորս թեկնածուներ: Վերջին անգամ՝ 1947-1949 նստաշրջանին, Սուրիոյ խորհրդարանին մաս կազմած են չորս հայ երեսփոխաններ (1 Դամասկոս, 3 Յալէպ): Յառաջիկայ տարիներուն մէկ կամ երկու հայ երեսփոխաններ մաս կազմած են խորհրդարանին: Սուրիոյ տագնապալի այս փուլին՝ 2020-ին, միաժամանակ երեք հայ երեսփոխաններ մաս կը կազմեն Սուրիոյ խորհրդարանին, արժանանալով ժողովուրդին քուէներուն նկատառելի տոկոսին:

Աւելցնենք, որ Սուրիոյ խորհրդարանի առաջին հայ կին երեսփոխանը եղած է դոկտ. Նորա Արիսեան (2016-2020): Խորհրդարանական այս ընտրութիւններով առաջին անգամ ըլլալով Սուրիոյ խորհրդարանին մաս կը կազմեն երկու հայ կին երեսփոխաններ:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ՝ ՈՐԶՈՒԻՔ ՍՈՒՐԻԱԿԱՅ ԵՐԵՔ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

21 Յուլիսին, Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի ուղղած իր նամակին մէջ, ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս իր խոր գոհունակութիւնը յայտնեց, Կիրակի, 19 Յուլիս 2020-ին Սուրիոյ մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն հայ համայնքին երեք զաւակներուն՝ Դամասկոսէն դոկտ. Նորա Արիսեանի, Յալէպէն՝ իրաւաբան Լիւսի Իսկէնեանի եւ տիար Ժիրայր Ռէիսեանի ընտրութեան առիթով, որպէս Սուրիոյ խորհրդարանի անդամներ:



Վեհափառ Յայրապետը իր նամակին մէջ յատկապէս կ'ըսէ. «Յայ համայնքը իր կարեւոր ներդրումը ունեցած է Սուրիոյ զարգացման մէջ, յատկապէս տնտեսական մարզէն ներս: Յայ ժողովուրդը միշտ եղած է երախտապարտ սուրիացի ժողովուրդի զաւակներուն, քրիստոնեայ թէ իսլամ, մասնաւոր հայոց ցեղասպանութենէն վերապրողներուն նկատմամբ իրենց ցուցաբերած մարդասիրական ոգիին համար: Յետեւաբար, վստահ ենք, որ մեր երեք երեսփոխանները իրենց գործուն մասնակցութիւնը պիտի բերեն Սուրիոյ վերականգնումին ու առաւել զարգացման նպաստող աշխատանքներուն՝ թարգմանը հանդիսանալով Սուրիոյ հայութեան հաւաքական յանձնառութեան»: Ապա, Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնը ու յաջողութեան մաղթանքները կը փոխանցէ Նորընտիր հայ երեսփոխաններուն:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԿԱՆ ՀԱՅՐԸ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՆՈՒՆՈՎ ՇՆՈՐՀԱԽՐԵՅ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՔ ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՆԵՐԸ



Չորեքշաբթի, 22 Յուլիս 2020-ին, յետմիջօրէի ժամը 3:00-ին, Բերիոյ Յայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան Ազգ. Առաջնորդարանի



դահլիճէն ներս հիւրընկալեց Սուրիոյ խորհրդարանի Նորընտիր հայ երեսփոխաններ՝ տիար Ժիրայր Ռէիսեան եւ իրաւաբան տիկ. Լիւսի Իսկէնեան:

Առաջնորդ Սրբազան Յայրը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին շնորհաւորութիւնները փոխանցեց սուրիահայ երեսփոխաններուն եւ Թեմի ժողովուրդին ու ժողովականութեան անունով անոնց մաղթեց աննահանջ երթ եւ մշտանորոգ կորով, յառաջ տանելու Սուրիական Յայրենիքի վերելքին նպաստող Նուիրական ծառայութիւնը: Այս առիթով, Առաջնորդ Սրբազան Յայրը հեռաձայնային կապ հաստատեց Դամասկոսի Նորընտիր հայ երեսփոխան դոկտ. Նորա Արիսեանին հետ, որուն փոխանցեց Նորին Սրբութեան շնորհաւորութիւնները, մաղթելով անսպառ ուժ եւ բարեյաջող երթ ազգօգուտ ծրագիրներով սատարելու Սուրիական Յայրենիքի վերածաղկումին:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի Կալուածոց Յոգաբարձութիւնը կը պահանջէ իր բոլոր ազգապատկան կալուածներու վարձակալներէն, ըլլան անոնք Յալէպէն ներս թէ դուրս, ամենակարճ ժամանակամիջոցին կապ հաստատել մեզի հետ ստորեւ նշուած միջոցներով, յստակացնելու համար իրենց կալուածներուն մէջ բնակողները կամ զանոնք զբաղեցնողները եւ կարգաւորելու յետնեալ իրենց կուտակուած պարտքերը փակելու գործողութիւնը, մինչեւ 31 Օգոստոս 2020, այլապէս Կալուածոց Յոգաբարձութիւնը պիտի դիմէ օրինական միջոցներու:

Հեռաձայն - 0096321-2122756
 WhatsApp - 0946901826
 Էլ. նամակ – periotemal@gmail.com

Կալուածոց Յոգաբարձութիւն

ՆՅԴ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՅԱԿՈՒ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. «ՄԵՆՔ ՄԵՐ ԶՈՅԳ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԵՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՂՔԻՆ ԵՂԱԾ ԵՆՔ ՈՒ ՊԻՏԻ ԸԼԼԱՆՔ ՄՇՏԱՊԷՄ»

«Երկիր»ը հետևեալ հարցազրույցը կատարեց ՆՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեանին հետ, որ անդրադարձաւ հայատրայեցական սահմանին վրայ տեղի ունեցող դէպքերուն, ՆՅԴ-ի պատրաստակամութեան՝ բոլոր կարելիութիւններով սատարելու հայրենիքին եւ հայութեան գերագոյն եւ հաւաքական շահերուն:

Ստորեւ՝ հարցազրույցը:

«ԵՐԿԻՐ».- Անգամ մը եւս Ատորպեյճան գինուորական բախում ստորեց, այս պարագային՝ ուղղակիօրէն Յայաստանի դէմ: ՆՅԴ Բիւրոն 14 Յուլիսին հանդէս եկաւ յայտարարութեամբ, որ ուղղուած էր ողջ հայութեան եւ կը հաստատէր Դաշնակցութեան պատրաստակամութիւնը՝ բոլոր կարելիութիւններով ծառայելու հայրենիքին ու հայութեան անվտանգութեան եւ զարգացման գործին: Կարելի՞ է մանրամասնութիւններ յայտնել այս ուղղութեամբ:

ՅԱԿՈՒ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.-

Նախ ՆՅԴ մեծ ընտանիքին անունով եւս կրկին խոր ցաւաւ կցուելին կը յայտնեմ նահատակուած հայորդիներու հարագատներուն, ինչպէս նաեւ ողջ հայ ժողովուրդին: Վիշտը բոլորիս է, ինչպէս որ բոլորիս է գոհուածներու եւ առհասարակ բոլոր մեր քաջարի գինուորներուն ու սպաններուն անձնագ ու խիզախումը՝ յանուն հայրենիքի իրաքանչիւր թիզ հողի պաշտպանութեան եւ հայ ժողովուրդի խաղաղ գոյակցութեան: Մենք մեկ անգամ եւս հպարտացանք, որ մեր թշնամիին հերթական արկածախնդրական փորձը բախեցաւ հայ մարտիկին ամուր եւ անսասան դիմակայութեան: Թշնամին անգամ մը եւս ականատես եղաւ ընդհանուր վտանգի շուրջ կրկին բռնցքուելու հայութեան հաւաքական կամքին:

Գալով ձեր հաստատումին, պետք է շեշտեմ, որ Դաշնակցութիւնը այն համահայկական կազմակերպութիւնն է, որ նման պատասխանատու պահերու միշտ կ'արձագանգէ հայրենի կարիքներու կանչին, մասնաւորապէս հաւաստելով, որ պատրաստ է իր բոլոր կարելիութիւնները ի սպաս դնելու հայրենիքի պաշտպանութեան եւ համակողմանի աջակցութեան գործին:

Մենք կապի մէջ ենք Յայաստանի ու Արցախի համապատասխան բարձրագոյն ղեկավարութեանց հետ՝ հունաւորելու համար համահայկական նեցուկի դրսեւորումները եւ համադրելու համար հայա-նպաստ քարոզչական աշխատանքն ու բանակին օժանդակութեան ծրագիրները:

Յայտնի է, որ երկար ժամանակէ ի վեր Ատորպեյճանի ղեկավարութիւնը վերադարձած էր իր հին հռետորաբանութեան, կը լարէր մթնոլորտը եւ հաւանական կը թուէր, որ նման գարգացումներ կրնան յանգեցնել նոր, վտանգաւոր հետեւանքներու: Պատահական պետք է համարել քաղաքական ու քարոզչական այն քայլերը, որոնց, աւագ եղբոր՝ Թուրքիոյ հետ, գինուորական գործողութիւններուն գուցա հեռ փորձեց նախաձեռնել հակառակորդ կողմը: Գոհունակութեամբ կ'անդ-



րադառնանք նաեւ, որ թշնամիի քարոզչական արշաւը ծանր պարտութիւն կրեց, Յայաստանի ու հայութեան հակահարուածը եղաւ ազդու: Ատորպեյճանի մէջ պաշտօնական եղաւ արտաքին գործոց նախարարը եւ այս հարցով թէ՛ Ատորպեյճանի եւ թէ՛ Թուրքիոյ մէջ այժմ կը տիրէ խուճապի մթնոլորտ: Այս խուճապի անընդունելի դրսեւորումներէն է Յայաստանի հիւլեական կայանը մըբակոծելու Ատորպեյճանի ուղղած սպառնալիքը, գոր, ընդհանրապէս, միջազգային հանրութիւնը մարդկութեան դէմ մեծագոյն ոճիր կը նկատէ:

«Ե».- Այսինքն, ըստ ձեզի, Ատորպեյճանի Թուրքիոյ հետ լուրջ ծրագիրներ կը հետապնդէ՝ հրահրելով այս նոր ընդհարումը: Այս պարագային քաղաքական-քարոզչական եւ ընդհանրապէս ի՞նչ ընելիք ունի հայկական կողմը:

Յ. Տ. Խ. - Ես չեմ կրնար յստակօրէն ըսել, թէ ի՞նչ մտադրութիւն ունէր Ատորպեյճան՝ անձագերծելով եւ ընդլայնելով այս սահմանային միջադէպը, սակայն որոշ եկթադրութիւններ կարելի է ընել՝ մեկնելով ակնյայտ փաստերէ: Օրինակ արձանագրենք, որ վերջին շրջանին ատորպեյճանական պաշտօնական քարոզչամեքենան հետեւողականօրէն կը փորձէր արտաքին լսարանին համար գարգացնել այն թեզը, թէ իրականութեան մէջ չկայ արցախահայութեան եւ անոր մարդկային ու ազգային իրաւունքներու հարց,

այլ հակամարտութեան առարկան Յայաստանի յարձակողապաշտ մօտեցումն է Ատորպեյճանի նկատմամբ եւ, այսպէս ըսած, Ատորպեյճանի տարածքներու բռնագրաւումը: Պատահական չէ, որ սահմանային այս համեմատաբար խոշոր բախումը ձեռնարկուեցաւ ոչ թէ Արցախի, այլ Յայաստանի նկատմամբ: Եւ դէպքերու նախորդող ժամանակահատուածին, նոյն սահմանագիծին վրայ, ժամանակ առ ժամանակ կրկնուեցան նման սադրիչ գործողութիւններ:

Ի հարկէ, հայկական կողմը ունի ընելիքներ: Անհրաժեշտ է նոյն համարձակ հակադարձութիւնը, որ տեղի ունեցաւ գինուորական բեմին վրայ, կազմակերպել նաեւ քաղաքական-դիւանագիտական ճակատին վրայ: Ատորպեյճանի անպատասխանատու ղեկավարութիւնը պատերազմական յանցաւոր գործողութիւն իրականացուցած է անկախ գերիշխան երկրի դէմ, որ ի դէպ ոչ մէկ կապ ունի Արցախեան հարցին եւ անոր հանգուցալուծման միտող ուղիներու հետ: Միւս կողմէ, հերթական անգամ Ատորպեյճան քամահրական վերաբերմունք կը դրսեւորէ Արցախեան հակամարտութեան լուծման ուղղութեամբ տարիներէ ի վեր գործադրուող ջանքերուն եւ այս գործին մէջ ներգրաւուած միջնորդ կողմերուն հանդէպ, երբ բանակցութեան մասնակիցները բազմիցս յայտարարած են հակամարտութիւնը խաղաղ ուղիով լուծելու անհրաժեշտութեան մասին:

Ճիշդ պահն է մերկացնելու ատորպեյճանական ղեկավարութեան այս անպատասխանատու գործելակերպը եւ պահանջելու միջազգային արձագանգ:

Ճիշդ առիթն է բացայայտելու նաեւ Թուրքիոյ միանշանակ ատորպեյճանամետ կողմնորոշումը, Յայաստանի նկատմամբ սպառնալիք հանդիսանալու հանգամանքը եւ անոր յաւակնոտ ծրագիրները՝ այս տարածաշրջանին մէջ եւս ծաւալուն հակամարտութիւններ հրահրելու եւ որպէս բաժնետեր, մասնակից

դառնալու փափաքով: Պետք է բոլորին համար պարզ դարձնել, որ նման դերակատար չի կրնար յաւակնիլ անաչառ միջնորդի դեր ունենալ:

Այս բոլոր հարցերուն մէջ պետական պաշտօնական, կուսակցական ու այլ մակարդակներով հայկական կողմին ընելիքները իրապէս շատ են:

Իսկ ՆՅԴ Բիւրոյին յայտարարութիւնը մեր արդէն իսկ ընթացք առած գործնական քայլերու մասին կը վկայէ: Դաշնակցութիւնը իր շնորհաւանքներով ու յանձնախումբերով, ինչպէս նաեւ ուղեկից միութիւններով ու համակիրներով գինուորական գործողութիւններուն լուրը ամենելուն պէս աշխատանքի անցած է տարբեր ասպարէզներու մէջ: Այդ աշխատանքը իր որոշակի պտուղները սկսած է, ու պիտի շարունակէ տալ՝ տարբեր մակարդակներու վրայ:

«Ե».- ՆՅԴ Բիւրոյի յայտարարութեան մէջ անդրադարձ կը կատարուի նաեւ հայկական զոյգ պետութիւններուն եւ հայկական բանակին կողքին ըլլալու հանգամանքին:

Յ. Տ. Խ. - Այդպէս է. անշուշտ, մեր գործունեութեան ասպարէզը միայն արտաքին ճակատը չէ: Մենք մեր զոյգ պետութիւններուն եւ մեր բանակին կողքին եղած ենք ու պիտի ըլլանք մշտապէս: Այսօր ալ պատրաստ ենք յանձնառութիւններ ստանձնելու, կազմակերպելու, կոչ ուղղելու համակիր շրջանակներուն ու ողջ հայութեան՝ համախմբուելու մեր անընկճելի եւ հերոսական բանակին աջակցութիւն ապահովելու գաղափարին շուրջ: Այն ինչի մասին հիմա կը խօսիմ, պարզապէս յայտարարութիւն չէ, մենք նման գաղափարի միս ու արիւն հաղորդած ենք եւ 2016-ի Ապրիլեան քառօրեայէն ետք, երբ կրցանք բաւականին 2020-ի գումար հաւաքել եւ տրամադրել մեր բանակին կարիքներուն:

Եւ հիմա ալ, տուեալ գաղափարը վերջին իրադարձութիւններու ազդեցութեամբ չէ, որ օրակարգի վրայ բերուած է. բաւական ժամանակ այս աշխատանքը նախապատրաստելու ընթացքի մէջ եղած ենք, իսկ այժմ անհրաժեշտ է գայն տեղափոխել իրագործման հուն:

Յայոց պետութիւնն ու բանակը մեր բարձրագոյն արժեքներն են, որոնց նկատմամբ սիրոյ ու գուրգուրանքի մենաշնորհ չի կրնար գոյութիւն ունենալ, կայ համընդհանուր պատասխանատուութիւն, եւ մենք մեր բաժին պատասխանատուութեան տերն ենք:

ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՐԵՔ ՆԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒՆ

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՎԵՐՁՆՏՐՈՒՄԸ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԺԻՐԱՅՐ ՌԷԻՍԵԱՆ

Ծնած է Յալէպ: Աւարտած է Անգլիոյ ակնաճանաչութեան ուսումնարանը, ապա երաժշտական բարձրագոյն ուսման սկսած է հետեւիլ Սորպոնի երաժշտական համալսարանէն ներս, որը կիսատ թողլով անցած է Գերմանիա, ուր հետեւած է երաժշտական յատուկ դասընթացքներու:

Րէիսեան եղած է Յալէպի ազգ. Սահակեան վարժարանի տնօրէն: Ներկայիս ան Յալէպի պետական երաժշտանոցի տեսչական եռանդամ կազմին մաս կը կազմէ եւ տեսական բաժնի վարիչն է:

Մաս կը կազմէ սուրիական «Լուսաւորող Մտքի Ձահակիրներ» միութեան Կեդրոնական Վարչութեան:

Գեղարուեստական ղեկավարը եղած է Յամազգայինի «Չուարթնոց» երգչախումբին (հիւրաբար), ԶԲԸՄ-ի «Գարուն» մանկապատանեկան երգչախումբին եւ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի աշակերտական երգչախումբերուն:

Գեղարուեստական ղեկավարը եղած է պետական սենեկային մէկէ աւելի նուագախումբերու, ներկայիս՝ «Պարոջ» սենեկային նուագախումբին:

Ժիրայր Րէիսեան երկար տարիներ մաս կազմած է Սուրիոյ 3այ Դատի Յանձնախումբին: Եղած է Բերիոյ 3այոց Թեմի Երեսփոխանական Ժողովի ատենապետ եւ անդամ:

Րէիսեան մաս կազմած է Սուրիոյ խորհրդարանի ազատութիւններու եւ մարդկային իրաւանց հարցերու, ինչպէս նաեւ հաղորդակցութեան եւ լրատուամիջոցներու յանձնաժողովներուն, եղած է Սուրիա-Պոլիվիա միջխորհրդարանական բարեկամական խումբի նախագահ:

Յեղիսակն է «Կոմիտաս» 3այ Երգի Ազգային Նկարագիրը», ինչպէս նաեւ «100 Նուիրեալներ» Յեղասպանութեան Օրերուն 3այ Ժողովուրդի Օտարագի Բարեկամներէն» գիրքերուն, նաեւ «3այ Երաժշտութեան Տարրական Գիտելիքներ» եւ «Սրինգի Երաժշտական Տարրական Դասընթացք» դասագիրքերուն:

Քանիցս արժանացած է Սուրիոյ պետութեան եւ արաբական այլ կողմերէ պատուոյ գիրքերու եւ գնահատագիրքերու, վերջինս սուրիական Ապտուլ Ռահման ալ Քաուաքիպիի նուիրուած «Օտարներու 3ողը» ֆիլմին երաժշտութեան հեղինակը եւ կատարման ղեկավարը ըլլալուն համար:

Պարգեւատրուած է նաեւ 33 նախագահին կողմէ «Մ. Խորենացի» մետալով, իսկ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ 3այրապետին կողմէ «Մ. Մաշտոց» շքանշանով: Երաժշտական մէկէ աւելի առանձին մրցանակներու արժանացած է:

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐՁՆՏԻՐ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ ԼԻՒՍԻ ԻՍԿԷՆԵԱՆ

Իրաւաբան Լիւսի Իսկէնեանի թեկնածութիւնը առաջադրուած էր Սուրիոյ խորհրդարանի օրէնսդրական երրորդ նստաշրջանին, իբր Պաաս կուսակցութեան երիտասարդական թեմի ներկայացուցիչ, Յալէպէն:



Դոկտ. Իսկէնեան ծնած է Յալէպ: Աւարտած է Յալէպի պետական համալսարանի իրաւաբանութեան ճիւղը: Իրաւաբանութեան դոկտորականի կոչում ստանալէն ի վեր կը պաշտօնավարէ Յալէպի Պետական համալսարանի իրաւաբանական բաժնէն ներս, իբր դասախօսական կազմի անդամ:

Վարած է բազմաթիւ այլ պաշտօններ եւ: Եղած է իրաւաբաններու արհմիութեան միւտորի ներկայացուցիչ 2015-ին, իսկ 2016-էն ի վեր կը վարէ Յալէպի բաժնի գիտական հարցերու փոխդեկանի պաշտօնը:

Համալսարանի տարբեր բաժանմունքներուն մէջ կը դասաւանդէ իրաւաբանական գանազան նիւթեր:

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՎԵՐՁՆՏՐՈՒՄԸ ԵՐԵՍՓՈԽԱՆ ԴՈԿՏ. ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ

Նորա Արիսեան ծնած է Դամասկոս: 1988-ին, Դամասկոսի համալսարանի բանասիրութեան ֆրանսերէն գրականութեան բաժնէն վկայուած է: 2001-ին աւարտած է 3այաստանի 3անրապետութեան գիտութիւններու Ազգային Ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկը պատմութեան մասնագիտութեամբ՝ տիրանալով պատմական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճանին:

1992-2006-ին աշխատած է Դամասկոսի մէջ 3այաստանի 3անրապետութեան դեսպանատան մէջ: 2006-2009-ին Դամասկոսի Ազգային միացեալ վարժարանի տնօրէն եղած է, 2005-էն դասախօս է Դամասկոսի պետական համալսարանին մէջ: 2010-2013-ին աշխատակցած է Սուրիոյ Մշակոյթի Նախարարութեան հետ՝ իբր բարգմանիչ եւ խորհրդատու: Անդամ է Արաբ Գրողներու Միութեան:



Նորա Արիսեան նկատառելի գիտահետազօտական աշխատանք տարած է 3այոց Յեղասպանութեան նիւթով, ինչ որ հիմք ծառայած է Սուրիոյ խորհրդարանին կողմէ 3այոց Յեղասպանութեան ճանաչման գործընթացին: Յեղիսակ է հայերէն եւ արաբերէն հինգ գիրքերու, հայերէնէ արաբերէնի թարգմանած է տասը գիրքեր, ստորագրած է տասնեակ յօդուածներ արաբական եւ հայկական մամուլին մէջ: Խմբագիրն է Aztag Arabic կայքին:

31 Յունուար 2019-ին սուրիական վարժարաններու պատմութեան դասագիրքերու վերամշակման համար տեղի ունեցած յատուկ սեմինարին, 3այոց Յեղասպանութեան մասին իր ելոյթն էւ առաջարկէն ետք, Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան Ուսումնական ծրագիրներու վերամշակման ազգային կեդրոնը համաձայն գտնուած է պատմութեան դասագիրքերուն մէջ ներառել 3այոց Յեղասպանութեան մասին Արիսեանի ներկայացուցած հատուածը:

Նորա Արիսեան Սուրիոյ նախկին խորհրդարանի Արտաքին հարցերու եւ Մարդու իրաւունքներու յանձնաժողովներու անդամ էր, ինչպէս նաեւ՝ Սուրիա-3այաստան միջխորհրդարանական բարեկամական խումբի նախագահ:

2019-ին մաս կազմած է Սուրիոյ սահմանադրական փոփոխութիւններու ընդլայնուած յանձնախումբին:

Նորա Արիսեան պարգեւատրուած է ստորեւ նշուած մետալ-շքանշաններով:

- 2006-ին Ռամկավար Ազատական Կուսակցութեան «Վահան Թեքեան» շքանշանով:
- 2011-ին, 3այաստանի 3անրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Ուիլիլմ Սարոյեան» մետալով:
- 2012-ին, 3այաստանի 3անրապետութեան նախագահի «Մովսէս Խորենացի» շքանշանով:
- Արիսեան արժանացած է նաեւ պետական պատուոյ գիրքերու եւ գնահատագիրքերու:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Համամճեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՍԻՐՎԱՐԳ ՀԱՄԱՄՃԵԱՆԻ մահուան սուգին:

Հանգուցեայի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 2 Օգոստոս 2020-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչի եկեղեցոյ մէջ, Նոր Գիւղ-Յալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:

ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



Սոսի Միշոյեան-Տապպադեան

 Գիշերը ցերեկ կ'ըլլայ,
 ցերեկը՝ գիշեր
 ժամանակը կը դառնայ
 նոյն տեղը
 նոյնը ընելու:
 Երազներ կը սպասեն
 իրենց շրջանին
 յոյսեր կը սառնին
 կանգ կ'առնեն
 ամեն ինչ կրկնություն
 ունայնության
 շրջանակին մէջ:
 - Այսօր ի՞նչ օր է:
 - Նոյնշաբթի...

Անորոշութիւն, մտահոգութիւն, նոյնութիւն ձանձրալի, բայց եւ այնպէս
 համաշխարհային միացում. քորոնայական արդարութիւն:

 - Զորոնա չէ
 հապա ի՞նչ է
 թագածահր:
 Ո՛չ, թագածահր չէ
 հապա ի՞նչ է
 պսակաձէ ժահր
 - Դե՛հ, ուրեմն՝ դիմակ հագէք
 չէ՛, մի՛ հագնիք
 կրէք.
 - կրէ՛ք որ այս խաղը կրենք-
 մի՛ կրէք
 դրէ՛ք:

- Դիմակ չէ
 դիմակը մասքն է.
 դնչակապ:
 Կապեցէք դունչը,
 չըլլայ որ
 ձեր շունչը վարակէք
 ամեն մարդ իր շնչածին պատասխանատուն է:

- Մնա՛ տանը, խնայէ՛ կեանքեր-

- Ես քորոնան սարքովի է
 Չեմ կրելու
 Չիփ պիտ, դնեն
 մեզ հետապնդելու
 Թող երազեն
 Չենք թողնելու:

- Զորոնան ում շունն է-

 Կը պատահի
 պատահեցաւ
 մեռաւ:

 Ամլանալ
 խողխողիլ
 լեխտիլ
 չքանալու դատապարտուիլ
 յանկարծ՝ խայծ մը ստանալ
 ոգելորուիլ
 փթթիլ
 ծլիլ
 բացուիլ
 կրկին իյնալու
 թառամելու
 ամլանալու
 անեանալու:

Ակնարկ


ԼԻԶՊՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ԱՅՍՕՐ



Արամ Աւագեան

1983-ի ամրան, հայոց պատմութեան հերոսական ընթացքը նոր թափ առաւ՝ հայ հողէն հեռու, հայ հողին ու հոգիին համար Փորթուկալի մայրաքաղաք Լիզպոնի մէջ մարտիրոսացած հայ ինկզ երիտասարդներուն շնորհիւ:

Երբ Հայոց Յեղասպանութիւնը դատապարտող ձայները լռած էին, միջազգային քարացած խիղճը հայու տառապանքին անտեղեակ կը ձեւանար, համատարած կեղծ անդորրութիւնը իրենց կեանքին գնով



խանգարեցին մարտիկներն արդարութեան, որոնք եկան պահանջելու ազգային բռնաբարուած իրաւունքները եւ վերականգնելու ազգային խոցուած արժանապատուութիւնը:

Անոնց գործին միացան բազմաթիւ հայ երիտասարդներու եւ պատանիներու սրտերը, մտքերն ու հոգիները, որոնք բոցավառած էին նոյն սրբազան վրեժի կրակով, միեւնոյն թշնամին հարուածելու պատրաստակամութեամբ:

Տարեցները անմասն չմնացին ստեղծուած ոգելորութենէն: Անոնք բազմամեայ իրենց փորձառութիւնը փոխանցեցին յաջորդ սերունդներուն, նոր ուժով եւ թափով յառաջ տանելու պահանջատիրութեան անկը:

Մարգարեատիպ յեղափոխականներու կողմէն արձակուած ուժանակները խորտակեցին արուեստական սահմաններն ու ոճագործին անձեռնմխելիութիւնը, նաեւ խորհրդաւոր պատգամով լեցուցին հայ աշխարհը եւ վերածուեցան պայքարի ու մաքառումի երգերու, որոնք սրտեր բոցավառեցին, մահու կենաց գուպարի մէջ նետելով սերունդներ:

Անդարձ գոհաբերութեան կրակով վառեցին իրենց սեփական կեանքերն ու լուսաւորեցին մեր պայքարի ուղին, յանուն հայ հողի ազատագրութեան եւ հայ հոգիի ազատիպ ծլարձակման, յանուն հայ ազգի վիշտերու ամոքումին, նահատակութեան պատմութեանը հազան ու մահուան նժարին վրայ դրին ազգի արդար պահանջը:

Լիզպոնի ինկզ մատաղներուն գործը, որպէս հոգեկան սնունդ կը բնութագրուի եւ նոր գոհաբերական թելադրանք կը պարունակէ իր մէջ: Ան տակաւին գալիք սերունդներուն, վաղուան տեսլահար հերոսներուն, վրեժի կրակով այրող պայքարողներուն ներշնչումի աղբիւրը կը նկատուի:

Հայ ազգը իր ազատագրական պայքարին սիրոյն միշտ ալ արին թափած է, սերունդներ իրենց հնարաւորութիւնները խորաչափած են, գիտակցաբար գատած են փշոտ ճամբան եւ պայքարը երբեք կանգ չէ առած: Պահանջատիրութեան շահը արդէն փոխանցուած է յաջորդ սերունդներուն:

Այս իմաստով, մեր անցեալի փորձառութեան, ներկայի մարտահրաւերներու դիմակայութեամբ կը նայինք եւ պետք է որ նայինք մեր ապագային:

Ա՛յս է հայ ազգային դաւանանքին ապահով խարիսխը, մեր պայքարի հիմնաքարն ու ելութիւնը:

 Ձախորդ օրերը կը յամենան երթալու
 մեր համբերութիւնը փորձելով:
 Զար պետք է դնել մեր անհամբեր փորին վրայ.
 - Այս օրերն ալ կ'անցնին-

 Եթէ կրնաս մարդոց մէջ ըլլալ եւ չհամբուրուիլ
 Եթէ կրնաս մարդոց մէջ ըլլալ եւ չհագալ
 Եթէ կրնաս մարդոց մէջ ըլլալ գուսպ, որոշ հեռաւորութիւն պահելով
 Եթէ կրնաս դրամատան առջեւ ժամերով կարգի սպասել, առանց համբերանքը կորսնցնելու
 Եթէ կրնաս փռշտալ, բայց արմուկովդ քիթք բերանդ գոցել
 Եթէ կրնաս փռշտալէդ յետոյ մարդոց ծուռ-ծուռ նայուածքները հանդուրժել
 Եթէ կրնաս դուրսը ներս բերել, երբ դուրս ելլելդ կ'արգիլուի
 Եթէ կրնաս առիթէն օգտուելով ձգձգուած գործերդ ընել
 Եթէ կրնաս ընտանիքիդ հետ լաւ ժամանակ անցընել
 Եթէ կրնաս չգիրնալ
 չձանձրանալ
 դիմանալ
 չջլատուիլ
 Եթէ կրնաս իմաստ մը գտնել
 համատարած անհեթեթութեան մէջ՝
 Այն ատեն առ ողջ ես, ո՛վ մարդ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ

Պատրաստ եղեք անսպասելի բաներու: Այնքան ալ պարզ շաբաթ մը չէ: Պետք է յարմարիք նոր պայմաններու եւ փոխեք ծրագիրները:



ՑՈՒԼ

Դուք շատ լաւ լեզու կը գտնեք ուրիշներու հետ, երբեմն նոյնիսկ գոհելով ձեր անձնական շահերը: Ձեր գոհողութիւնները աննկատ պիտի չմնան:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Այս շաբաթ դժուար պիտի ըլլայ խուսափիլ վեճերէ: Կը թուի, թէ ձեր շրջապատը դիտմամբ կը գործոնէ ձեր բարկութիւնը: Անհրաժեշտ է սահմանափակել անախորժ մարդոց հետ յարաբերութիւնները:



ԽԵՑՁԵՏԻՆ

Եթէ լաւ գաղափարներ եւ համարձակ ծրագիրներ ունիք, մի՛ յետաձգեք անոնց իրականացումը: Ծաբթուան առաջին կէտը շատ անելի բարենպաստ է, քան երկրորդը:



ԱՌԻԾ

Յարմար շաբաթ է ծրագիրներ կազմելու եւ կարելու որոշումներ գոյացնելու համար:



ԿՈՅԱ

Նիւթական ձեր հարցերը, յատկապէս կալուածներու վերաբերեալ, պիտի լուծուին: Խորհեցեք, թէ որո՞նք կարելի է վստահիլ եւ որմէ՞ զգուշանալ:



ԿՇԻՈՔ

Այս շաբաթ առիթ պիտի ունենայ յաջողութեամբ աւարտելու ձեր նախկին ծրագիրները: Զեւ բացառուիր օգտակար ծանօթութիւնները եւ հանդիպումները այնպիսի մարդոց հետ, որոնք կրնան վստահիլ:



ԿԱՐԻՃ

Արդիւնաւետ շաբաթ է, հետեւաբար կեդրոնացեք կարելու գործերու վրայ, յատկապէս այն ծրագիրներուն, որոնք կը պահանջեն ստեղծագործ մօտեցում եւ վառ երեւակայութիւն:



ԱՐԵՆԱՄՈՐ

Շաբաթը, թէեւ դժուարութեամբ, բայց բաւական յաջող պիտի անցնի:



ԱՅԾԵՂՋԻՐ

Դուք պատրաստ էք արկածախնդրական նախաձեռնութիւններու եւ պիտի կարենաք համոզել թերահաւատներն անգամ:



ՋՐՅՈՍ

Շաբաթը արդիւնաւետ պիտի անցնի, եթէ ճիշդ գնահատեք առաջնահերթութիւնները: Կենդանացեք կարելու բաներու վրայ եւ փորձեցեք չանձնուիլ, ինչ ալ ըսէ շրջապատը:



ՋՈՒԿ

Աւելի լաւ է չգբաղիլ կարելու գործերով, որովհետեւ սխալելու հաւանականութիւնը մեծ է: Զայլերու դիմեցեք միայն եթէ վստահ էք դաշնակիցներու աջակցութենէ:



ՀԱՅԿԱԿԱՆ ԾԻՐԱՆԸ



Ծիրանի հայրենիքը հիւսիսարեւելեան Հայաստանն է: Հայաստանի մէջ ծիրանը տարածուած է հնագոյն ժամանակներէն:

- Բ. ա. 3-րդ հազարամեակին աքքատացիները գայն կը կոչէին «արմանու» «արմանական», այսինքն՝ «հայկական», իսկ Հայաստանը՝ Արմանի «ծիրանի երկիր»:

- Միջագետքի հնագոյն բնակիչները՝ արամեացիները (քաղդէացիները) ծիրանի ծառը կը կոչէին «խագուրա արմեայա» «հայկական խնձորենի»:

- Արաբներէնով ծիրանի անուններէն մէկն է «թուֆահ ալ արմանի», որ կը նշանակէ «հայկական խնձոր»:

- Բ. ա. 1-ին դարուն հռոմեացի գօրավար Լուկուլլոս, վերադառնալով հայոց արքա Տիգրան Մեծի դէմ մղուող պատերազմէն, Հայաստանէն Հռոմ տարաւ ծիրանենիի տնկիներ, որոնք այնտեղ մշակել տուաւ եւ անուանեց «Հայկական սալոր»: 18-րդ դարու խոշորագոյն բուսաբան Ժան Փաթիստ Լամարկ նկատեց, որ ատիկա ոչ թէ սալոր է, այլ նոր ցեղի ներկայացուցիչ, ուստի գայն անուանեց *Armeniaca Vulgaris*:

- Հայկական ծիրանի համբաւով օտարները Հայաստանը կ'անուանեն ծիրանի երկիր:

- Ձգտելով ժխտել այժմու Թուրքոյ տարածքներուն ժամանակին հայկական եղած ըլլալու իրականութիւնը, թուրք գիտնականներ բազմիցս փոր-

ձած են ծիրանի գիտական անուանումէն հանել «հայկական» բառը: Մասնաւորապէս, 1972-ին Լեւոնիկրատի մէջ տեղի ունեցած 12-րդ Բուսաբանական Խորհրդաժողովին անոնք նոյնիսկ փորձած են փոխել ընդունուած լատինական անուանումը սելճուկեան ինչ-որ անուանումով մը, սակայն խորհրդաժողովի մասնակիցներուն կողմէն վճռականապէս մերժուած է իրենց առաջարկը:

Ծիրանի օգտակար յատկութիւնները

Ճաշելէ առաջ մէկ-երկու ծիրան կերեք ձեր մարտողութիւնը խթանելու համար: Ծիրանին պարունակած ալքալիները կը չեղոցացնեն թթուները, իսկ իր լուծողական յատկութեան շնորհիւ՝ անիկա աղիքներէն կը մաքրէ պատերուն փակած անցանկալի մնացորդները:

Ծիրանը կը պայքարի նաեւ սակաւարիւնութեան դէմ:

Այս համեղ պտուղը երկաթի հարուստ աղբիւր է, ինչ որ կ'օգնէ պայքարելու սակաւարիւնութեան դէմ:

Ծիրանը լուծողական է նաեւ:

Փորկապութեան պարագային, թարմ կամ չոր ծիրան կերեք, եւ շատ արագ կը լուծուի ձեր պնդութեան հարցը: Կարելի է չոր ծիրանը կտրտել, թրջել եւ հիւրը խմել:

Շնորհիւ իր պարունակած կենսասնութիւններուն եւ հանքայիններուն ծիրանի յաճախակի օգտագործումը մորթը կը պահէ առողջ, ողորկ եւ փայլուն:

Թելադրելի է, որ յոյ կիները եւ կաթ տուող մայրերը տուրմն ու քաղցրաւենիները փոխարինեն ծիրանով, քանի որ անիկա անելի սննդարար է եւ առողջապահական: Սակայն պետք չէ չարաշահել:

Ծիրանը կը կարգաւորէ նաեւ սրտին աշխատանքը: Դարձեալ շնորհիւ իր հարուստ բաղադրիչներուն՝ օրական քանի մը թարմ կամ չոր ծիրան ուտելը կը նպաստէ սրտանօթային համակարգի լաւ գործունեութեան:

Ա. կենսասնութիւնը հարուստ ծիրանը կը պահպանէ նաեւ տեսողութիւնը եւ կը պաշտպանէ քաթարաքթ եւ այլ հիւանդութիւններէ: Ա. կենսասնութիւնը ոչ միայն տեսողութեան համար ամենէն անհրաժեշտ կենսասնութիւններէն է, այլ նաեւ հզօր *սկիթոքսիտան* է: Ծիրանը կը պարունակէ մեծ քանակով փոթափում եւ շատ քիչ աղ, քան՝ պանանը եւ կ'օգնէ արեան ճնշման կայունացման:

Օգտուիք ծիրանին բարիքներէն: Անով փոխարինեք վնասակար քաղցրեղէնը:





Ռաֆֆի Սիկսիան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Անցելով շաբթուան ընթացքին ՅՄԸՄ-ի պասքեթի տղոց խումբը մեկնեցաւ Զոմս, ուր իր մասնակցութիւնը բերաւ Սուրիոյ պասքեթի ախոյեանութեան բ. փուլի մրցումներուն: ՅՄԸՄ-ի կազմը խաղաց Զուրիէ, Սաուրա եւ Թալիա խումբերուն դէմ եւ կրեց երեք պարտութիւն:



- ԶԵԸ-ի պասքեթի աղջկանց խումբը Լաթաքիոյ մէջ տեղի ունեցած բ. դասակարգի լրացուցիչ փուլի մրցումներուն պարտութեան մատուցեցաւ Իթթիհատէն 42-46 արդիւնքով: Երկրորդ օրը կազմը յաջողեցաւ յաղթել Սալամիէին 52-54 արդիւնքով:

- Սուրիոյ ֆութպոլի Նախագահի Բաժակի մրցումներուն Զալէպի Իթթիհատը շարունակելով իր ճախող արդիւնքները կրեց անակնկալ պարտութիւն մը Թարթուսի Սահելէն, որուն պատճառով ան դուրս մնաց մրցաշարքէն: Դամասկոսի Ուահտէն եւ Ճէշը յաջողաբար պարտութեան մատուցեցին Ֆութուէն եւ Շրթան, իսկ Մաճո խումբը, որ մաս կը կազմէ բ. դասակարգի խումբերուն, յաղթեց Միսֆաթ Պահիասին:

- Վերջին պարտութիւնը արձանագրելէ ետք, Զալէպի Իթթիհատ խումբի մարզիչ Մուհամմետ Աքիլ Ներկայացուց իր հրաժարականը: Ակումբի վարչակազմը յառաջիկայ օրերուն համար մարզիչի պաշտօնը առժամաբար վստահեցաւ Ահմատ Զաուաշին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՎՈՒՄԸ ԴԱՐՁԱՄ ՍՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ

Պատմութեան մէջ 34-րդ անգամ ըլլալով Սպանիոյ մայրաքաղաքի թագաւորական խումբը՝ Ռեալ Մատրիտը յաջողեցաւ տիրանալ երկիրին ախոյեանութեան:



Նախքան տարեշրջանի մրցաշարքին աւարտը, 2-իտանին խաղացողները կրցան 2-1 արդիւնքով պարտութեան մատնել Վիլառեալը: Խումբը իր յաղթանակը կը պարտի ֆրանսացի յարձակողական խաղացող Զարիմ Պենսիմային որ դարձաւ երկու կողերու հեղինակ: Պենսիմային

երկրորդ կողը եղաւ տուգանային հարուածով: Զաթալոնական Պարսելոնայի խումբը, որ կը տառապի Ներքին հարցերով, 2-1 արդիւնքով գիշեցաւ Օսասունային: Պարտուած խումբին միակ կողը Նշանակեց արժանիացի Մեսսին՝ մնալով կոլիստներու աղիւսակին առաջին դիրքին վրայ:

ՔԻՔԻ ՍԻԹԻՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԱՐԱՐՏԱԾ Է ԶԱՄՓ ՆՈՅԻ ՄԵՋ

Սպանական «Մոնսո Տիփորթիս» օրաթերթը Կիրակի օրուան լուրերուն մէջ անդրադարձաւ Պարսելոնայի մարզիչ Քիքի Սիթինի մեծ հաւանականութեամբ քաթալոնական խումբէն հեռանալուն՝ խաղացողներուն մեծամասնութեան հետ հարցեր ունենալուն պատճառով: Թերթը յիշեց, որ խաղացողներուն եւ մարզիչին միջեւ յարաբերութիւնը այնքան ալ համերաշխ չէ եւ անոնք կ'ուզեն մարզիչին հեռացումը: Ըստ տեղեկութիւններուն, Քիքին փոխարինող թեկնածուներէն մէկն է Պարսելոնայի Նախկին խաղացող Փաթրիք Զլոյվերթը: Զլոյվերթին անունը առաջարկողներէն մէկն է խումբի արժանիացի խաղացող Լիոնել Մեսսին, որ վերջերս սկսած է իր անձնական կարծիքը պարտադրել վարչութեան, միեւնոյն ժամանակ սպառնալով, թէ կրնայ հեռանալ խումբէն, թէ պահանջները չիրագործուին:

Աւելցնենք, որ հոլանտացի մասնագետը կը տիրապետէ վեց լեզուներու՝ հոլանտերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, իտալերէն եւ փորթուկալերէն:

Աւելցնենք, որ հոլանտացի մասնագետը կը տիրապետէ վեց լեզուներու՝ հոլանտերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, իտալերէն եւ փորթուկալերէն:


ԼԱԶԱՉԵԹԸ ՊԱՅԱՆՋՈՒՄԸ Է ԻՎԵՆԹՈՍԻ ԿՈՐՏԷ

Կիրակի օր իտալական եւ ֆրանսական մամուլը անդրադարձաւ Իտալիոյ ախոյեան Իվենթոսի սկսած լուրջ բանակցութիւններուն Անգլիոյ Արսենալ խումբի ֆրանսացի խաղացող Ալեքսանտր Լաքազէթի հետ: Ըստ աղբիւրին, իտալական ակումբի ղեկավարները հանդիպում մը ունեցած են Լաքազէթի գործակալին հետ եւ սահմանած են պայմանագրութեան յօդուածները: Աւելցնենք, որ ֆրանսացի խաղացողը Արսենալին միացաւ 2017-ին, փոխան 55 միլիոն եւրոյի: Ան այս տարեշրջանին յաջողեցաւ Նշանակել 12 կոլ:



Թիւ 17

Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է d7 #
 <ՄԸՄ-ի ձատրակի Յնձիւ.

Երկուրեւրթի	Երեքեւրթի	Չորեքեւրթի	Հինգեւրթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
27/7	28/7	29/7	30/7	31/7	1/8	2/8
27° 43°	27° 44°	26° 43°	25° 42°	24° 40°	24° 39°	24° 39°

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի, Շաբաթ, 18 Յուլիս 2020-ին երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ միջնակարգի ամսվերջի հանդէսը:

Հանդիսութեան ներկայ էին Թեմիս Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս

ԱԶԳ. ԶԱՐԷՆ ԵՓՓԷ ԾԵՄԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԱՄՍՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

«Այս պայմաններուն լոյսին տակ, մեր նկարագիրն ու անհատականութիւնը կրկնակի կերտուեցաւ: Մենք կրցանք զանոնք ամուր պահել նախ Աստուածային նախախնամութեամբ, ապա մեր ծնողներուն եւ

լութիւն յայտնեց սրբազան հօր, Ազգ. Վարչութեան եւ Ուսումնական Խորհուրդին, ճեմարանի Խնամակալութեան, պետական տնօրէնին, ուսուցչական եւ վարչական կազմերուն, երգչախումբի ղեկավարին, խմբային ասմունքներու պատասխանատուներուն, Բերիոյ Թեմի «Դպրոց» հիմնադրամին, ԱԶԵ Ծեմարանի Զալիֆորնիոյ Ընկերակցութեան եւ անոր Հալէպի յանձնախումբին, Համագայի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Յանձնախումբին, Օ. Պետրոսեան պարգեւին, ԱԶԵ Ծեմարանի Շրջ. Միութեան, անհատ բարերարներուն եւ բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս ճեմարանին կողքին մնացին:

Աւարտին ան իր խօսքը ուղղեց ճեմարանականներուն, յայտնելով, որ երբեք տարուան ժրջան աշխատանքի արդիւնքով այսօր հասած են միջնակարգ, ուստի յաջողութիւն մաղթեց անոնց նախքան պետական քննութիւններու արդիւնքներուն յայտարարումը:

Տնօրէնը ուժ, կորով եւ համբերութիւն մաղթեց երկրի վսեմաշուք նախագահին տոքթօ. Պաշար ալ Ասատին, որպէսզի ան Սուրիան

Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ միջնակարգի իրենց վկայականը ստանալու, իսկ հայերէն լեզուի առաջնակարգ ուսանողները տնօրէնութեան կողմէ գովասանագիրներու արժանացան:

Օրուան եզրափակիչ պատգամը տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեմ. Մասիս Ս. Եպս. Զօպու-



Ս. Եպս. Զօպուեան, Ազգ. Վարչութեան, բարեսիրական, մարզական



Միութիւններու ներկայացուցիչները, ճեմարանի Խնամակալութիւնը տնօրէնութեան եւ ուսուցչական կազմը:

Հանդէսը բաց յայտարարուեցաւ ու ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին նահատակներուն յիշատակը:

Երգչախումբը հանդեսին բացումը կատարեց Սուրիոյ եւ ՀՀ գոյգ քայլերգներով:

Հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Արեւիկ Օզճեան, իսկ արաբերէն՝ Սերլի Պետրոսեան:

Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանի 9-րդ կարգի երգչախումբը յաջորդաբար ներկայացուց փունջ մը հայերէն, արաբերէն եւ անգլերէն երգեր, գեղ. ղեկավարութեամբ Ռուզան Պարսումեանի:


Երգչախումբին յաջորդեցին խմբային հայերէն եւ արաբերէն ասմունքները:

Արաբերէն ուղերձը ընթերցեց Արեգ Արոյեան: Ան 9-րդ կարգի աշակերտութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ ծնողներուն՝ ոոջ տարուան ընթացքին իրենց ցուցաբերած հոգատարութեան ու խնամքին համար: Ապա շնորհակարտեց իր դասընկերներն ու դասընկերուհիները եւ անոնց մաղթեց նորանոր յաջողութիւններ:

Հայերէն ուղերձը ընթերցեց Աննա Սաղպագարեան, որ յայտնեց.

մեր հարազատ դպրոցին շնորհիւ: Կանգնելով աս բեմին վրայ կու գանք խոստանալ, որ այստեղ ըլլանք ուսման, գիտութեան եւ ազգային բարձր իտեալներու ձգտող հաւատարիմ ճեմարանականներ՝ կամքի ուժով եւ հաւատքի գօրութեամբ»:

Բեմ հրաւիրուեցաւ Ազգ. Զա-



րէն Եփփէ Ծեմարանի պետական տնօրէն Ապտ ալ համիտ Մասրի: Ան շնորհակալութիւն յայտնեց Հալէպի կրթական տնօրէնութեան, թեմիս առաջնորդին, ճեմարանի խնամակալութեան, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, ինչպէս նաեւ ծնողներուն, որոնց միասնական աշ-

խատանքին շնորհիւ աշակերտները կը հասնին յաջողութեան:

Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանի տնօրէն Յակոբ Զիլեճեան ընթերցեց ճեմարանի միամեայ գործունէութեան տեղեկագիրը՝ յայտնելով, որ ճեմարանը իր յանձնառու հիմնադիրներուն եւ ներկայ անձնակազմին շնորհիւ կը մնայ լոյս եւ ապաւեն, որպէս Սփիւռքի կրթօճախ արեւմտահայերէնի գարգացման եւ պաշտպանութեան համար:

Զիլեճեան յատուկ շնորհակա-




եան, որ ըսաւ. «Բոլորս մարտահրաւերի մը դէմ յանդիման ենք՝ պայքարելու Սուրիական Հայրենիքին համար, մեր հայրենիքին ու Արցախին համար, պայքարելու մեր ազգային արժէքներուն համար: Արտօնուած չէ թույլամորթ ըլլալը: Հայ ժողովուրդը կոչուած է յաղթահարելու այս մարտահրաւերը, իսկ դուք, սիրելի աշակերտներ, ձեր ուսումով պայքարեցաք ու յաղթեցիք: Այսօր ուրախութիւն կ'ապրինք ի տես այս հպարտառիթ պատկերին»:

Սրբազան Հայրը երբեք միտքերով եզրափակեց իր խօսքը. «Աղօթել. եթէ չենք աղօթեր, կը ձախողինք մեր կեանքին մէջ, որովհետեւ մեր ուժը եւ ապաւենը Ամենակալն է: Ուսումը եւ վկայականը քսանմէկերորդ դարուն ամենակարեւոր գէւքերն են: Իսկ նպատակասլաց ըլլալը պայման է յաջողութեան հասնելու համար: Զեզ մէ իւրաքանչիւրը նպատակ մը պէտք է ունենայ: Ուրեմն աղօթեցէք, սորվեցէք եւ նպատակ ունեցէք ձեր կեանքին մէջ»:

Հանդէսը փակուեցաւ ճեմարանի քայլերգով, կատարողութեամբ երգչախումբին, ապա սրբազան հօր «Պահպանիչ» աղօթքով:

Ծեմարանի պատմութեան մէջ



առաջնորդէ դէպի խաղաղութիւն:

Պարգեւատուեցան 2018-2019 ուսումնական տարեշրջանի 9-րդ կարգի պետական քննութեանց առաջնակարգ երեք հետեւեալ աշակերտները՝ Աբրահամ Աւրնեան



(առաջին), Սարին Շահինեան (երկրորդ) եւ Սելա Պազարպաշեան (երրորդ):

Աբրահամ Աւրնեան ստացաւ նիւթական պարգէն հանգ. Միլվարդ Համամճեանի կտակին համաձայն:

Բեմ բարձրացան 2019-2020 տարեշրջանի 53 շրջանաւարտները՝

աննախադէպ տարեշրջան մը եղաւ 2019-2020 տարին, երբ, հակառակ պակասեցողութեան ստեղծած բացում դժուարութիւններուն, աշակերտները կրցան յաղթահարել ամեն խոչընդոտ եւ բեմ բարձրանալով վկայուեցան ճեմարանի պայծառ բեմահարթակին վրայ:

Ժիրայր Կարապետեան